ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/52978-2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-326-25.10.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1663 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-326-25.10.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից բխում է, որ կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը պետք է հաստատվի անձամբ կենսաթոշակառուի կողմից՝ նրա ստորագրությամբ: Հետևաբար, պարզ չէ, թե ինչ ընթացակարգով է բանկի կողմից հեռահար եղանակով հաստատվելու կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը՝ ապահովելով կենսաթոշակառուի ստորագրությամբ նշված փաստի հաստատումը: Թեև նախագծով սահմանվում է, որ կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը բանկի կողմից հեռահար եղանակով հաստատվելու կարգը սահմանվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, այնուամենայնիվ, գտնում ենք, որ, առանց օրենքում այդ ընթացակարգի վերաբերյալ որևէ դրույթի ամրագրման, հնարավոր չէ լիարժեք գնահատել առաջարկվող կարգավորման դեպքում ի հայտ եկող հնարավոր ռիսկերը: Այսպես, օրինակ, եթե հեռահար եղանակը ենթադրում է նաև հեռախոսի միջոցով կամ էլեկտրոնային կապի միջոցներով կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստի հաստատում, ապա, կարծում ենք, որ վերջինիս համար խնդրահարույց է՝ կենսաթոշակառուի կողմից անձամբ և նրա ստորագրությամբ նշված փաստի հաստատման անհնարինության տեսանկյունից:

Պարզաբանման կարիք ունի նաև «տեղաշարժման խնդիրներ ունեցող կենսաթոշակառու» եզրույթը, քանի որ այն գնահատողական բնույթի է և պետք է հստակեցվի ոչ թե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, այլ օրենքով:

Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարությունը լիազորվում է օրենքի հրապարակմանը հաջորդող երեք օրացուցային ամսվա ընթացքում նախագծով առաջարկվող գործընթացն ապահովելու նպատակով իրականացնել համապատասխան փոփոխություններ:

Նշված դրույթը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ լիազորող նորմերի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելու պահանջին, քանի որ վերջինից պարզ չէ՝ ինչ փոփոխությունների մասին է խոսքը: Այդ առումով հարկ է նշել, որ, նախագծի 1-ին հոդվածի

համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է սահմանի համապատասխան կարգ:

Ընդունելի համարելով օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման տրամաբանությունը՝ միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը քննարկում է, և շուտով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվելու «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով անդրադարձ է կատարվելու օրենքի նախագծով կարգավորվող դրույթին, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը փոխկապակցված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասին (անձը տարեկան մեկ անգամ՝ ոչ ուշ, քան վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը, անձամբ բանկ ներկայանալու միջոցով բանկին հավաստում է Հայաստանի Հանրապետությունում լինելը), Հայաստանի Հանրապետության կառավարության նախագծով առաջարկվում է այդ մասից հանել Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վերաբերյալ հայտարարությունը բացառապես բանկի տարածքում տալու պահանջը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահելով հայտարարությունն անձամբ բանկ ներկայացնելու ընթացակարգ սահմանելու լիազորությունը: Այսպիսով, առանձին դեպքերում, կենսաթոշակառուին հնարավորություն կտրվի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վերաբերյալ հայտարարությունը բանկ հանձնել (բանկ ներկայացնել) ոչ միայն բանկի տարածքում, այլև, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում իր բնակության կամ փաստացի գտնվելու վայրում:

Ընդ որում, հայտարարությունն անձամբ բանկ ներկայացնելու ընթացակարգը սահմանելու լիազորությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահելը նպատակ ունի ապահովելու հարաբերությունների ավելի ճկուն կարգավորում՝ հաշվի առնելով խնդրին առնչվող շահառուների փոփոխուն կազմը և այն հանգամանքը, որ այդ հարաբերությունների կողմ են նաև բանկերը, որոնց տեխնիկական հագեցվածության և ծրագրային ապահովության հնարավորությունների հաշվառմամբ կարող է սահմանվել արդյունավետ ընթացակարգ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ առաջարկում ենք ձեռնպահ մնալ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունից և վերջինիս անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության հեղինակած օրենսդրական նախաձեռնության շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2019 թվականի N 1663 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Սմբատ Սահյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-326-25.10.2019-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-327-28.10.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Օրենսգրքի 11-րդ գլուխը լրացնել նոր «152.3»-րդ հոդվածով՝

«Հոդված 152.3.Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում գովազդների տեղադրման նորմերի չկատարելը

1. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում, առաջին անգամ՝ գովազդների տեղադրման համար հատկացված տեղերի սահմաններից դուրս կամ սահմանված ծավալի գերազանցմամբ գովազդների տեղադրումն առաջացնում է տուգանք՝

բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ գովազդատուի կողմից կատարվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով

2. Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող տարածքներում, գովազդների տեղադրման համար հատկացված տեղերի սահմաններից դուրս կամ սահմանված ծավալի գերազանցմամբ գովազդների տեղադրումն՝ երկրորդ եւ հաջորդ յուրաքանչյուր դեպքի համար առանձին առաջացնում է տուգանք՝

բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի կամ գովազդատուի կողմից կատարվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով

Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում սոցիալական գովազդների վրա:

Հոդված. 2 Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Առկա խնդիրները եւ իրավիճակը

Բազմաբնակարան շենքերում գովազդների տեղադրման համար սահմանված են տարածքներ՝ համապատասխան մակերեսներ, որոնք նախատեսվում եւ հատակացվում են՝ բազմաբնակարան շենքի ֆիզիկական անձ կառավարման մարմնի կամ իրավաբանական անձ կառավարման մարմնի պատասխանատու անձի եւ գովազդատուի փոխհամաձայնության արդյունքում կնքված պայմանագրի պայմաններին եւ պահանջներին համապատասխան: Նշված գովազդները հիմնականում տեղադրվում են վերելակների կաբինաների ներսում, իսկ վերելակ չունեցող բազմաբնակարան շենքերում՝ մուտքերի արտաքին կամ ներքին պատերին՝ սահմանված տեղերում: Այսօր պրակտիկայում բազմաթիվ են այն դեպքերը, երբ վերոնշյալ գովազդները տեղադրվում են կնքված պայմանագրով սահմանված պայմանների եւ պահանջների կոպիտ խախտումներով: Այս պահին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքում նմանատիպ խախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող դրույթներ բացակայում է:

Առաջարկվող օրենքով պատասխանատվություն սահմանող դրույթները չեն տարածվում սոցիալական գովազդի վրա, քանի որ համաձայն ՀՀ Գովազդի մասին օրենքի 2-րդ հոդվածի՝ սոցիալական գովազդը առեւտրային բնույթ չկրող (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող)՝ մարդու իրավունքներին եւ պարտականություններին, բնակչության առողջության պահպանման, ինչպես նաեւ առողջ ապրելակերպի եւ սոցիալական պաշտպանության, կամավորության, բնության պահպանության, կրթական ծրագրերի, հայրենասիրական դաստիարակության, մշակույթի պահպանման, տարածման ու զարգացման, աղետների դիմակայման, ազգային շահերի պաշտպանության եւ այլ բնագավառների վերաբերյալ հասարակությանը իրազեկելու նպատակով տարածվող տեղեկատվություն է, որը ՀՀ Գովազդի մասին օրենքի 13-րդ հոդվածի 1.2-րդ կետում նշված կարգով ճանաչվել է որպես սոցիալական գովազդ

Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենքի ընդունումը հնարավորինս կնվազեցնի գովազդների տեղադրման համար կնքված պայմանագրերով սահմանված պայմանների եւ պահանջների խախտման դեպքերը, ինչպես նաեւ դրանց հետեւանքով առաջացող բացասական երեւույթները, օրինակ՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ներքին մակերեսների վրա անօրինական՝ տարերային ձեւով գովազդներ չեն տեղադրվի, որն առաջի հերթին վնասում է պատերի հարդարումը: